

# ՇԱՐՇՈՒՄ

Պուշխրիոյ համար 12 Գր-  
 ստիկան 6 Գր-  
 Վարձուհայ 15  
 Վարձուհայ 8

Ստեփանի համար  
 Տարիկան 3 Գր-  
 Վարձուհայ 1.50 Գր-

Գրքերու և արտ-  
 քերու արժեքն համար 40 Գր-  
 ինչ վերջին երեսի հա-  
 մար 20 սանիթի Ե. Երեմի  
 անկի անգամ և և և համար  
 20 Գր- զիջող կրթչայ :

Վարձուհայի համար ձեռքի 10 սանիթի

Նախկին ցրտի ցրեկ  
 ինքն-գրութեան հաս-  
 ցի ին

Редакция на ввстникъ  
 «Шаржумъ»  
 Варна

Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

— 0 —

Արտատպանի համար  
 ձեռքի  
 ( 20 ԱՄՆ.ԹԻՄ )

Պուշխրիոյ համար  
 ձեռքի  
 = 15 ԱՄՆ.ԹԻՄ =

Գրութիւնք չէս ցրտի

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ շՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇՈՒՆԻՍ ՕՐԵՐԸ

«ՇՈՒՆԻՍ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻՆ ՎՃԱՐԷ

### ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

Մինչ վարդ դռնէն արեւելքին կրտսրաց՝  
 կը տեղային շողի բոյլեր բիւր, ազոտ :  
 Լուս լուսնակը եթերքէն մէջ վարանոտ՝  
 կը տեղունէ՛ր թաւալիով յարձրեթաց :

Մինչ զեփուր կ'աւտէր լո՛յս, առաւօտ  
 Իր սիրական տերեւներուն ցոյնն թաց :  
 Շիկնոտ վարդը կը խնկարկէ՛ր բոյր կենաց  
 Սոխակին որ՝ կ'երգէր սէրը — որ առօր :

Եւ մինչ կոկոն ծաղկի մը պէս կը փթթէր  
 Ժրպիտ մ'անհուն հորիզոնէն վա՛ռ, եռուն :  
 Իմ հոգւոյս մէջ կը ծնէին նոր վիշտեր :

Ձի հայրենի իմ գաղտնուն մէջ, հեռուն,  
 Արշալոյս մը ազատութեան չեկա՛ւ դեռ՝  
 Յրուել մուծը, սե՛ւ գիշերը ցաւերուն :

ՎԵՏԱ

չէ դառնում, գոնէ իր հասի մէջ  
 գտնված վատ անհատներին կողմ-  
 նակի կերպով թեյագրում է  
 մատնիչ դառնալ : Թուրք կա-  
 ռավարութեան շահերը պաշտ-  
 պանել և հայ յեղափոխականնե-  
 րին հալածել :

Քրքոֆիլ հայ եպիսկոպոսին  
 կատարելապէս վաշիլ գործ ինչ-  
 պէս երեւում է Բարթոլոմէոս  
 փաշայ եպիսկոպոսի փառքը նա-  
 խանձ էր յարուցել Մուրատեան  
 Մէլիքանէզէք եպիսկոպոսի որ-  
 տում : Սրանից քսան տարի ա-  
 ռաջ Պաշակալ Մուրատեանին  
 ներկայացնում էր իր բնւ մի նա-  
 խանձոտ, աղտոտ և ետամուտի պ  
 հոգեւորական : Մուրատեանը գա-  
 լիս է հաստատելու քսան տարի  
 տառջ արտայայտված կարծիքը  
 շատ պերճօրէն, անձամբ :

ՎՍՐԴՕ

### ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Անգլիա հիմա կը պատրաստուի  
 ամենամեծ շքեղութեամբ և իր ա-  
 ւանդական սովորութիւններու  
 համաձայն կատարել թագաւորի  
 օծման հանդէսը :

Հանդէսը շքեղ և ուրախ ըլ-  
 լալու մեծ հուանականութիւն  
 կայ, որովհետեւ թէ կառավա-  
 րութիւնը և թէ ժողովուրդը ա-  
 զատեցան ամենամեծ շոգէն՝  
 Թրանսվալի ճնշող պատերազմէն :  
 Օծման հանդէսին վերջն է որ  
 Անգլիական կառավարութիւնը պի  
 տի աշխատի իր կորսնցուցած դիր  
 քը՝ գոնէ ըստ երեւոյթին, էրկին  
 վերստանալ միջազգային քաղա-  
 քական հրապարակին վրայ :

Երկար երեք տարիներ Անգլիա,  
 շնորհիւ Թրանսվալի պատերազ-  
 մին, կարող զիբրք մը շէ կր-  
 ցաւ բռնել միջազգային խնդիր-  
 ներու վերաբերմամբ, և հազիւ  
 կրցաւ իր շահերը միայն պաշտ-  
 պանել : Անշուշտ այդ գառն ի-  
 րողութիւնները վրիպած չեն  
 Անգլիոյ վարիչներու ուշադրու-  
 թեանէն :

Միացեալ նահանգները Գու-  
 պայի հասարակագետութիւնը  
 ստեղծելէ վերջ, հիմայ ալ կը  
 պատրաստուին վայելուչ կերպով  
 մը վեջ յալ նաեւ Ֆիլիպեան  
 կղզիներու մէջ : մինչեւ օրս շա-  
 րունակուող արխիեպիսկոպեան,  
 Ֆիլիպպինցիները օժտելով ինք-  
 նուրոյն սահմանադրական վար-  
 շութեամբ մը :

Միւսիթարական է. ուրեմն ա-  
 րխիեպիսկոպոսի պիտի դադրի  
 նաեւ Ֆիլիպեան կղզիներու մէջ,  
 ինչպէս դարեցաւ ի Թրանսվալ  
 Երկու քաղաքակիրթ մեծ աղ-  
 դեր վերջ ի վերջոյ հասկցան որ  
 իրենց համար մեծ նախատիք  
 մըն էր մարտիրոսացնել փոքրիկ  
 ժողովուրդները, ինչ որ քաղա-  
 քական գոռն շահերու համար :  
 Լաւ է ուշ, քան երբեք. կը շը-  
 նորհուրենք Ամբրիկայիները և  
 Անգլիացիները, և կը բաղձանք  
 որ այդ ազատասէր ու քաղաքա-  
 կրթուած ժողովրդները ոչ միայն  
 այլ ևս այդպէսի անպատուաբեր  
 պատերազմներ չը մղեն, այլ և  
 ուրիշ փոքրիկ տանջուող ժողո-  
 վուրդներու հանդէս ալ օգտակար  
 հանդիսանան :

Մասնաւոր աղքատներէ կիմա-  
 նանք որ բանտարական շարժումն  
 ըր իովկասի մէջ լուրջ կերպա-  
 րանք ընդունած են. այնտեղ  
 կազմուած է նաեւ «հայ ազգային  
 բանտարական կուսակցութիւն» մը  
 որ իր ազգային շահերը պաշտ-  
 պանելով հանդերձ, միւս բանու-  
 րական կուսակցութիւններու հետ  
 միացած պիտի գործէ :

Հայ բանտարական կուսակցու-  
 թիւնը որոշած է բանտարներուն  
 մտաչելի հրատարակութիւններ  
 ընել, և արդէն ալ գործի սկսած  
 է :

Ատոյ աղբիւրներէ կիմանանք  
 որ շուտով այդ հրատարակու-  
 թիւններէն երկուսը լոյս պիտի  
 տեսնան :

Ֆիլիպպինցի լոնգիլը դեռ չը  
 լնացաւ. ինչպէս ամիսներ առաջ

### ԶՍԻՒՆԻԱՅԻ ԱՌԱՋ ՆՈՐԴԸ

Անցեալ օր Պոլսական թեր-  
 թիւը հազարեցին որ Զմիւռնիա  
 յի առաջնորդ Մուրատեան ե-  
 պիսկոպոսը որոշել է մի քանի  
 ժամանակով Պալիս գնալ ինչ որ  
 հիւանդութեան պատճառով :

Նոյն տեղեկութիւնը առին  
 մեզ և Զմիւռնիայից, միայն ա-  
 լելցնելով որ, այդ հիւանդու-  
 թիւնը լոկ պատրակ է, որով-  
 հետեւ Մուրատեանը վախենում է  
 իր գլխին մի փորձանք գալուց :

Մուրատեան եպիսկոպոսը մին-  
 չեւ իր անյալող կաթողիկոս ըն-  
 տրվելը լաւ հոգեւորականներէից  
 մին էր համարվում. իր աշխար-  
 հական ժամանակ նա կոչկասի  
 հին յառաջադիմականներէից է ե-  
 ղել և իբրեւ քաղաքականագէտ  
 կասկածելի մարդ Ռուսաստանից  
 փախել է : Այդ պատճառներով  
 նա մի որոշ համակրութիւն էր  
 վայելում թէ կոչկասում և թէ  
 ծանկատանում : Եւ այց իր կա-  
 թողիկոսական ընտրութիւնը ան-  
 յալողութեան մատնվելուց յե-  
 տոյ՝ Մուրատեան եպիսկոպոսը  
 գարձաւ մի ծոյլ, անշնորք և

յետագէմ մարդ, նա իր յետա-  
 դիմական ձգտումներով, ծուլու-  
 թեամբ և դէպի հայ ժողովրդի  
 ներկայ պահանջները ունեցած  
 անտարբերութեամբ կարծես  
 վրէժ լա՛ծել ուզեց իր կաթողի-  
 կոս չը հաստատվելու փոխարէն :

Մի քանի տարի է որ Մուրատե-  
 անը Զմիւռնիայի առաջնորդ է.  
 նրա օրով Զմիւռնիայի ազգային  
 հաստատութիւնները, դպրոց-  
 ները աւելի ընկան, քան երբ և  
 իցէ : Մուրատեանը իր առաջ-  
 նորդութեան երկար շրջանում  
 հետաքրքրվեց միայն իր փորով  
 և իր մասնաւոր բարեկամներ  
 վրէժով : Հանրային շահը և  
 գործը գոյութիւն չունեցաւ Մու-  
 րատեան եպիսկոպոսի համար :  
 Նա քաջալերեց նրանց՝ ովքեր  
 խոշնդոտ հանդիսացան ազգային  
 շարժման գործին :

Ինչպէս անցեալ անգամ հա-  
 չորդեցինք, Մուրատեան եպիս-  
 կոպոսը վերջերս ամենամեծ կոպ-  
 տութեամբ և աւելի տարածա-  
 յող ձեւ տալով՝ առաջնորդարու-  
 նից վախտում է մի յեղափոխա-  
 կան պատրիարկի. և այդ բռնի  
 տարածանութիւնը պատճառ է  
 դառնում յեղափոխականի ձեր-  
 քակվման :

Այդ քայլով Մուրատեան ե-  
 պիսկոպոսը եթէ անձամբ մատնիչ

Միտ Սիմոնի խնդիրն էր, որուն մասին օր մը կիմացուէր թե ազատեցաւ ապականելու ձեռքէն, հետեւեալ օրն ալ կը հերքուէր, հիմակ ալ միբրմիտանն է. օր մը կօծուի, հետեւեալ օրն ալ օծու մը կը հերքուի:

Երեկ պուլկարները հակառակ էին օծման, միւս օր յանապ պատրիարքարանք, սյուսր սլիսկիբի յոյն եպիսկոպոսը, սանդրն խեղճ Չինովիթի շարունակ իր արձակուիցը կը յետաձգէ անպատճառ միբրմիտանը օծուած տեսնելու համար:

Սուլվանը Չինովիթի քիճն բռնած պարել կուտայ, պարը ճարպիկ վարժագետ մըն է Սուլվանը, ինչպէս կերելի:

468

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Չինովիթի 1/14 յունիս 1902

Այս շաբաթ անդուր աւագանի թիւն մը պատահեցաւ. Գասուրա թաղին մէջ սնունտի նպարավաճառ մը կա, մօտակայ (գարազի) սասիկաները լաւ գիտնալով որ խանութին մէջ բուսական հարստութիւնը կը գտնուի կորոշին կերպով մը ձեռք անցունել եղած գրամները: Ասպէս սեւա սրթ սասիկան մը եւ կրկու ջանտարներ մտահայ կերակրագործի մը կը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՍՍՍ Ա.

ԳԼՈՒԽ Գ

Միւս օրը ստաւտեան ժամը 10ին Մաղիկեանը հնչեցնում էր Կիրիլ Պետրովիչի տան հնչակը:

Մուրը բացեց ազգայինը եւ իմանալով կեղծի մակարտներ-խակչն ներս հրաւիրեց:

Ընդունարանի սեմի վրայ Մաղիկեանին դիմաւորեց իւրը Մարաֆովը՝ մի գեղեցիկ, բարձրահասակ, մօտ 50 տարեկան մարդ, ժպտաւ շրթունք ներք վրա, ուստի խօսելով:

— Բարեւ, պարոն Մաղիկեան, ներեցէք, ես հայերէն լաւ չը գիտեմ, պարաւարդում եմ ուստի խօսելու ձեզ հետ. բայց միեւնոյն է, յօստով եմ որ իրար լաւ կը հասկնանք. համեցէք նստեցէք: Շատ ուշախ ե՛ ձեզ հետ ծանօթանալովս. մերոնք պատմում էին ձեր մասին, ես էլ զարմանում էի թէ ձեզ նման մարդը ինչպէս է կեցել այս խաւ անկիւնը. դու մի առ ուրիշ փորի ցուէք ունեցել:

Ինչ կուզէք արդեօք. թէ՛, թէ՛ սուրճ:

— Շնորհակալ եմ Պ. Մարաֆով, ես արդէն խմել եմ:

— Ձէ, չէ, անպատճառ միտանն սուրճ կը խմենք. Լիզա, աղախինն ձայնելով, սուրճ բերէք մեզ համար: Է՛, պարոն Մաղիկեան, ինչպէս է հաւանում է՞ք այս քաղաքին:

Թաղով կառայարկեն որ բռնախ մը չինէ՛. որը կրկին գործը կատարածու ձեւ մը կանոնէ, կրտն թէ խանութի մէջ վառօդ եւ ծխախոտ կը գրանուի եւ զիշեր ասնն յանկայձակի խոզարկութիւն պիտի կատարեն. Գանի մը անգամ կերթան բաւախն ասնելու. — սյուսր վաղը բեկով կը խուսափի կերակրագործը, բայց կրկին կատարեն եւ կը խոտտանան մէջի եղած վառօդի եւ ծխախոտի հաւոյթէն մաս մը բաժին հանել իրեն. կրկին վառօդը յաջորդ օրուան հոմար հաստատ խոտուած կուտայ. սասիկանին եւ իր աւագանի ընկերներէ մեկնումէն յետոյ կրկին վաղը բժը մաս մը լով որ կրնայ մեծ վնաս մը գու թէ նպարավաճառուն եւ թէ իր գլխուն կորուցէ եղել թիւնը սասիկանացիներն յայտնել. սասիկանացիներ անընտել անոր տատանակոտութիւնը կը քաղաքէ գիւրք հասկցնելով որ ու եւ վառնոց չը կրնար չալ իր զինուն քանի որ ժա անակին իրեն եկած եւ յայտնած է ասնն բան. յաջորդ օրը կէս գիշերի ժամանակ սեւամորթ սասիկանը իր ընկերներու հետ, երեքն ալ քաղաքացիի պէս ծպտուած, նսեւ կրկին վաղը կերթան խանութին ասնելու արձակ համարձակ զուրը բանալու. սասիկանը բռնախին ձեռք ասած գրուը կը բանայ, անոր կը հետեւին իր կրկու ընկերները. կրկին վառօդը սասիկանացիներն ստացած պատուէրին համաձայն գոյջ գրք մը կը բռնէ. սարճանակներու յանկարտեան պայթիւնը օդը կը թնդացնէ եւ ազդով պարտիկ սասիկանը իր հետ ընկերացող տաս գիւրքներով կերք աւագանիը, որոնցմէ ու:

տիկանը մը ուրքն վիրաւորուած էր, կը ձերբակալեն. Յուզումը մեծ է մտաւանդ յոյներու մէջ. նպարավաճառը հիլլէն ըլլալով իր հիւպատոսին միջոցով բողբոջ է կառավարութեան գէտ:

Կատարուած քարքարոտութիւնը քաղաքին ապահ վարձեան պաշտօն ունեցող անհասաներէ կատարուած ըլլալու համար՝ աւելի ուշագրաւ է:

Քաղաքի մէջ գիւրքներն անպակաս չեն. անդին շրջակաները Օէ-ալմիթի սարերուն վրայ Չաքրըճալը օդուի քաղաքային թիւները բաւական մտահոգութիւն կը պատճառեն կառավարութեան: Երկու տարիէ քաղաքացիներէ (էջքա) կերտուր եւ այդ երկու տարուան միջոցին 60-70է աւելի կառավարութեան մարդ պատնած է. ինքը յայտարարած է որ իր կողմը գիւրքային կամ քաղաքացիի հետ չէ. իր հայրը սպանողները կառավարութեան պաշտօնէն երն են եւ ինքը մինչեւ իր սահը պիտի կուսի հօրը վիճեղ լւծելու համար. անցեալ տմտոյն վերջը կառավարութիւնը 50ի չափ ձիւտը եւ հետոս գիւրքները գրկեց ողջ կամ սպանուած ձերբակալելու համար Չաքրըճալը օդուի եւ կուտ մէջ քաղաք 11 հատը մարգարէին գագը զրկելէ յետոյ անկերտ թացու իր մի քանի ընկերներով:

Տեղական եւրոպական կամ յունական թերթերուն խօսիւ պատուիրուած է որ ու եւ քան չը գրուի անոր քաղաքային թիւն մասին. բայց շաբաթ շաբթ իր օր Չաքրըճալը ձեր:

բակալուած չը լինի. շուկայի մէջ յանկարծ կատարուած անցը կը տեսնենք, ազդու կը Չաքրըճալը մասին է. բայց ժողովուրդը վարժուեցաւ ալ եւ թէ նոյն իսկ զինքը ձերբակալուած բերին չը պիտի հատապուր:

Մինչ այս մինչ այն քաղաքիս ապահովութեան կատարելի է. ձերբակալուած անմեղները, որոնք բանէ մը տեղեկութիւն չունին խանութի մէջ կը հեծեն. ձեռք եւ հայտնաբեր պիտան չէ խեղճը որոն պիտան. բացառութիւն կը կազմէ Ամերիկահայաստանի ձերբակալուածը. ինչպէս ըստիք անցեալ անգամ գեա բանտն է, ոչ մի քրիստոնէայ իր քով կը թողուեն. սպանները կը վախնան որ բռնախ մէջ ալ յետափոխուէր չը հանեն. Գասուրաները կը խառնակեն իրենց վատ արարքները եւ կը հոգորտան ըսելով՝ մեք իրենք սյուսնքն մասնեցինք եւ պիտի մտանք ժողովրդի սիրոյն համար. ժողովրդի հարգատութեան համար. ե ցաւալին այն է որ ջոջ ազաներ չեն պակսիր գանոնք քաղաքիս:

Կալով սեղոյ, ստաւնորդին, ինչը եղաւ արմատական պատճառ Ամերիկահայաստանի կրկնաօդի ձերբակալման. իր կրկնաօդը վաւերաւ մտր. իր անհակէն դուր շրջեր, նոյն իսկ իր թաթը անգամ մը, որ պատարագը տեսնելու կուտար. եկեղեցի չի գար, կը պատրուակէ թէ արեւ մա թիզն ու նի. այդ բուժելու համար Պոլիս պիտի մեկնի եղեր. արդեօք վախէն չէ՞... Իսկ իր աւալ ժողովրդի առաջնորդները:

պարտաւորու ճիգեր թափել. զոհողութիւններ անել Տաճկաստանում ապստամբութիւն տեղեկու համար բոլորովին աւելորդ բան է:

— Այո, կարող եմ ոտս թերթերը, գիտեմ նաեւ որ ուսը հակառակ է այդ ապստամբութեան, որովհետեւ ինքն է ուզում տիրանալ մեր հայրենիքի մնացած մասին էլ. եթէ ոտսին հարցնես, նա չի ուզում որ Ռուսահայերն էլ իբրեւ հայ գոյութիւն ունենանք. բայց այդ մեզ չի արգիլում ուսական այդ ձգտումներին գիմարում. Մեծ կառավարութիւններէ ձգտումն է միտ ոչնչացնել փոքրիկ ժողովուրդներին, եւ փոքրիկ ժողովուրդները պարտականութիւնն է միշտ գիմարող իրենց գոյութեան ապահովեցող ունեցողութիւններին. գիմարող առանց գանազան գուշակութիւնների, որովհետեւ փրկութիւնը միայն գիմարութեան մէջ է:

— Բայց պարոն Մաղիկեան, այնոյս գիմարութիւնը միթէ՞ խեղացութիւն է. ընդհակառակը երբ համոզուած ես թէ գիմարելը աւելի մեծ կորուստ է սպանում, չը պէտք է գիմարել. Այնտարեւ միայն զգացումները կառավարելու եւ գործ տեսնել չի կարելի. պէտք է մի քիչ էլ. ինչու եմ ասում մի քիչ, աւելի շատ աչքի առջիւ ունենալ իրական կացութիւնը: Իրական կացութիւնը սյու է. մենք փոքրիկ ժողովուրդ ենք. երեք պատի թիւներէ մէջ բաժանված, ոչ հարուստ ենք, ոչ կուսելու բացառիկ ընդունակութիւններ ունենք. իսկ գիմարողներս ունենք հսկայ հակառակորդներ ինչպէս կարող ենք յուսալ որ մեր գիմարութիւնը յաջող կը կայող է ունենալ:

— Բայց այդ իրականը այժի ստաւ ունենալով հանդերձ, մենք չը պէտք է մոռանանք աւելի շեշտաւոր իրականութիւնը. Այսինքն մեր մեծ մասը գտնվում մի քանի քաղաքային կառավարութեան բռնութեան տակ, այդ մասը գոյում է որ ալլեւս անկարելի է այդպէս ապրել եւ կուս է յայտարարում իր բռնակալին, նա գանդվում է կուս շրջանում, կատարած բռնակալը աւելի մեծ հարուածներ է տալիս մեր եղբորը կուսողին օգնել պէտք է. այդ կուսին աւելի զօրաւոր եւ թշնամու համար աւելի վտանգաւոր կերպարանք տալու համար: Թրքահայը կուսում է նրան պէտք է օգնել առանց մանրամասն հաշիւների մէջ մտնելու. նրան գէնքէ հարկաւոր իր պատը, իր գոյքը, իր կեանքը պաշտպանելու համար եւ մեր առաջին անհանախակեան գործն է նրանց գէնք հայթայթել, տաքացած վերջացրեց Մաղիկեանը:

Մաղիկեանի ձայնը արդէն բաւական բարձրացել էր, եւ այդ ժամանակ ներս էր մտել Կիրիլ Պետրովիչը. ուսու ու փոս, անկիւնում կանգնած դիտում էր իրենց վարժագետին, որը համարձակվում էր Մարաֆովի հետ այդ ձայնով խօսել:

Երբ Մարաֆովը առանց վիրաւորվելու Մաղիկեանի խօսակցութեան ձեւից՝ ժպտալով մտիկ էր անում. Կիրիլ Պետրովիչին սիրապատեց այդ շուրթերէն հասած զարմանքը եւ նա մտնելով խօսակցութեան տակ:

— Բայց սուրճերը պաղցիցին. մոռացել էք սուրճերը, իմեցէք, հետո կրկին խօսեցէք: Մաղիկեան, վարժագետ, օրջալի բարձր ձայն էք ունեցել... (Շարունակելի)

կղերն էր. բայց եթէ սարկուճեան ներկայացուցիչ մը ուզուի հիմակ, յարգելի բացատրութիւնով, կղերական մը պէտք է ցուցնել: Պօլիտոր իր Օրմանանը ունի, իսկ Իգմիթ Մուրաւեանը, չնք գիտեր թէ որք աւելի ծանր կամ թեթեւ կը կշռէ. թէ իրօք Իգմիթի մէջ յեղափոխականներ կան, այդ չենք գիտեր. բայց եթէ մեր Սրբազան առաջնորդը, Բնթերքցողը համարձակօրէն կրնայ բռնել ինքն մէկը իր նախաքայլերու մէջ գաւաճանական փորձ մ'է ըրած. ինչ փաստեր կան որ ապագային մէջ ալ չը պիտի ընէ: Հանգիստ կայէք զուրք վաւ գաւաճաններ, եթէ պաշտօնական յեղափոխականներ չը կան Իգմիթի մէջ, մենք կը կարծենք որ ժողովուրդը պարզ գաւաճներ չ'են պահար:

Իգմիթ խորունկէն կայրկոծուի. բարի վեր?

Յ. Գ. Գաւաճան մասն չ'ենք միայն յարգողը, Գարեգինը և Մաքսուան ևն:

ԵՐԿԱՍ

Ռուստուք 3 յունիս 8102

Երեկ, «Լոմ» պարտիզին մէջ, տեղի ունեցաւ գրական, երաժշտական և թատերական գերեզման ի նպատակը քաղաքացիական և Մանկապարտէզին և Երկսեռ հանդիսատեսներու գոհացուցիչ բազմութիւն մը ներկայ էր: Կողմէնք մի քանի գիտողութիւններ ընել և մասնաւոր առջին ցերեկոյթին ակնդէտ թերութիւնները: Անաւատիկ հրաւէր մը անթիւ տըրտունիներու և գուցէ նոյն իսկ նայահոյանքներու ասարտին: Կը գիտակցինք, Սակայն մենք գո՛ւ սրտով կը հանրաբեմնք կանգնել այդ տարափին զիմաց, քան թէ ինչալ կողմի ահալութեան աղետաբեր և թունաւնց զիրկը: Յայտարարութիւնները արդէն կը խոստանային խառն և անկանոն հանդէս մը և ոչ թէ գերեզման: Բրոկրամը կը բազկանար վեց մասերէ, քսան և մէկ թիւ. որոնց մէջ կը հայտնեք նաեւ «Ժլատ» Ապստամբութիւնը և «Գործարար» Նորիս ու վերջաբան «Հայաստանը» իբրև թիւեր:

Առաջին մասին մէջ Երգ խմբի ռազմաբան յետոյ՝ մանկապարտէզի փոփոխները—քառասունի մօտ կատարելու հինգ թիւ ունէին շարունակաբար. պար, երգ, մարմնամարզ ևն, որը սեւեց սօսաւորակէս երեք քատորգ ժամ: Սա, կարծենք, ինք իրեն առաջնացուցիչ է և Երկրորդ մասը Բուլղարիի «Ժլատ Ապստան» էր: Այդ տրամը որ միջնադարին բեմի վերայ ընդունուած է իբրև ախպ և Գրոսած «Համէթի» բարձրութեան վրայ, մի քանի պատկեր և անմիտ կրճատումներով, բոլորովին այլանշակութեամբ էր և կործնուցած իր հոգին և միտքը: Դերակատարները գեռ չէին կարողացած հասկնալ թէ իրենց ներկայացուցած ամբողջութիւնը մէջ էր և ոչ թէ մաս մը «Ժլատ» Ապստանէ: Չենք գիտեր թէ ինչու երեք արարուածները ձուլուած էին ի մի, Դերակատարները միայն Պ. Ա. Մ. Կատարեց իր դերը պարտիւնութեամբ և բազաամամբ միաներուն հետ բաւական յաջող: Տրամ—վերջը նշանակէ—ներմուծած էին մենամարտ մը, որը սատարիկ անյաջող և քնախորթ վերջաբանը

կազմեց անշարի գեղեցիկ և հուշակաւոր արամին: Սակայն անհէն կարեւորը, «Ժլատ Ապստան» իր բարձրութեանը մէջ, բոլորովին անհամապատասխան էր մեր ազգային կեանքի ներկայ պահանջներուն: Իսկ գաւաճութեան կարծենք անխոնհմութիւն էր ժողովուրդը ոչ միայն չը կը լեց պէտք լզած սպասարութիւնը, այլև չը կարողացաւ բխունել անոր միտքը: Դառն իրողութիւն մըն է որ, մեր ազգային, մարտնչի բեմը շատ ինկած, ետ մնացած է. իսկ այս պիտի հանգամանքներու մէջ իրապատ կը փճանայ կը մահանայ...

Երրորդ մասը իր մանկապարտէզով կրկին ծանձրացուցիչ էր: Զորքորդը աւելի կողիկ և փայլուն էր. միայն օրիորդը և պարտն իրենց այտասանած բանաստեղծութիւնները եթէ աւելի լաւ գոց գիտնային, աւելի յաջող կըլլար: Հինգերորդ և վեցերորդ մասերը նոյնպէս յաջող անցան, ի հարկէ. եթէ նպատակը ազգային հաստատութիւններու և դերակատարները ոչ—դերասան երիտասարդներ չըլլային շատ աւելին պահանջուի. իրաւունք պիտի ունենայինք լեհերկոյթը տեւեց մինչև, գիշերուան ժամ մը 10<sup>1</sup>, առանց ծրագրին վիճակահանութիւնը քաշուելու: Երկրորդ մասնախումբը ոչ մի ջանք չէր ինչոյս յանդիման տուականերու ծախուելուն, բայց երբէք ցերեկոյթին կանոնաւորութեան և կարգապահութեան: Շատ լաւ կըլլար, եթէ փոխանակէին մանկապարտէզի տասնեակ թիւերը և ժլատ Մայետ տըրքովը ընթերցանութեամբ և նուազով, Այն ասան ցերեկոյթը աւելի լուրջ, կանոնաւոր, «չքեզ» կըլլար և այդքան երկար չէր տեւեր: Այստեղ, ինչպէս կերեւի, ցոյց տուինք միայն այն գլխաւոր թերութիւնները, որոնցմէ խուսաբելու է ամեն մարմին սոյնանման պարզաներու մէջ:

Ստեհե

ԹԱՍՍՍ ԿԼԶԻՆ

Ուղիղ Գաւաճարի ծոցին քովը, Կաւալա քաղաքէն կէս ժամ հեռաւորութեան վրայ, Էկէեան ծովին մեծ կղզիներէն մին է Թասսոս, կղզին շատ բարեբեր է և արեւը ծածկուած էր հարուստ գիւղերով, բայց աւելի կարեւոր է անոր ռազմական նշանակութիւնը:

Եգիպտոսի նախին խտիֆ, Մամուտ Ալթիփաչան, որ կապառնար Սուլթաններու գահը իւրիւր, Գաւալի էր. երբ Եգիպտոսի խտիֆ դարձաւ, իր հարեւնիքի մէջ մշտնէս մը շինեց, ուր ձրարար կուսանին Մակեդոնացի սօֆիստները: Այդ Մէտրէսէն կղզին առաւ խտիֆին, ահա այդպիսով կղզին դարձաւ խտիֆներու կալուածք. խտիֆական պաշտօնեայ մը հարկը կը հաւաքէ Մէտրէսէն պահելու համար:

Մտնելու Թասսոսի մէջ լուրջ խոսքով թիւններ տեղի կուսնան, Սուլթանը հանգամանքէն օգտուելով կուզէ կղզին արխանայ, Գաւալայի կայսրականին կը հրամայէ երթալ կղզին ապստամբութիւնը մարել և բնակիչներուն յայտարարել որ կղզին անկախ զաղա է: Այդ կատարուելէն վերջը

կղզին նոր կայմակամ կը նշանակուի և զօրք կը զրկուի հոն:

Սակայն, Անգլիա եգիպտոսի վարչութեան լեհանով կը բողոքել Թասսոս: Գրան, յգ կամայականութեան դէմ և կայմակամին ու զօրքին կղզին հեռագրուէր կը պահանջէ:

Միւսնոյն ժամանակ եգիպտական զբաւաւոր մը կը զիկուի կղզին կրկին գրաւելու համար:

Կըսուի թէ Անգլիա մտադիր է կղզին գործնել գիտողական կէտ մը հանդէպ Մակեդոնիոյ մէջ կատարուելիք գէպքերու:

Չը պէտք է մտնուլ որ Գաւալայէն յիշ մի հարաւ կը գտնուի հրաշալի ծովածոց մը, նազըլա: Անոր մէջ կրնայ պահուուիլ մեծ նւաւատրոմիզ մը տոսնց ու է յարձակումէ վախնալու. որովհետեւ բնականապէս շատ լաւ պաշտպանուած է: Այդ ծոցը ռուսներուն կը պատկանի. հոն է Իլինքոթի ճակարանը, որ, չը նայած իր համեստ անուան, մեծ վանք մըն է հարեւորէր վարդապետներով, ծոցին արեւը չը կապտուած են անտառներով և ձիթենիներով: Այդ ծոցին մէջ Բագնուած նւաւատրոմիզը կրնայ ազատ համարձակ արշաւանքներ գործել Էկէեան ծովուն ամբողջ լայնութեամբ և վտանգի ժամանակ զայ հոն թագնուի:

Անգլիացիները աս պիտեն, և հիմայ, պատերազմը վերջանային յետոյ, մեծ գործունէութիւն կը յարցնեն Էկէեան ծովուն մէջ:

Պօլսն եկած տեղեկութիւններու համեմատ Երբեք շփոթութիւնը մեծ է Անգլիոյ բռնած դիրքէն. ինչ կուզէ ընել Անգլիա, այս հարցին պատասխանը կուզէ գտնել Երբեքը:

Պօլսոյ մէջ կը կատարին որ Անգլիա ինչպէս որ դրամով և գէնքով կօքնէ եմէնի ապստամբութեան, նոյնը ընէ և Մակեդոնիոյ մէջ, երբայկ կղզին գրաւուի տիրանայ անոր արեւուն:

ԵՐԿԱՍԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՆ ՀԱՇՈՒԹԻՒՆԸ

II

Այս անգամ էլ ուզում ենք մեր ընթերցողներին ծանօթացնել երոպական ուրիշ ազգերի մասունի թրանս. վախ և Անգլիայի միջև կայացած հաշտութեան մասին այտայայտած կարծիքները հետ:

Նախ սկսենք ֆրանսական թերթերէն:

«Տէն» «Հաշտութեան լուրը անվերան պէս ամեն մարդի առաջին զգացումը եղաւ ուրախանալ այդ իրողութեան հանդէպ՝ որով վերջ էր գրվում մի զըզվելի պատերազմի մի տանջող կոշտարի: Վերջապէս, այլ եւս արեւը չը պիտի ողողի Աֆրիկայի հողը:

Այլ եւս մի փոքրիկ հերոս ժողովուրդը գերազանցօրէն անհասարկ կրի չը պիտի մղէ իր իրաւունքները, օճախի և բոլոր հոգեկան բարեմասնութիւնների համար, որոնք արժէքն են կազմում ազգային կեանքի: Մի մեծ ժողովուրդ այլ ևս չը պիտի մղվի արեւապետական քաղաքականութեան մէջ, հակառակ իր անհոգութիւններին, սկզբունքներին և շահերին»:

«ՅԻՒԱՐՕ» (Երեսօրիսանս կան ժողովի նոր փոխ նախագահի կարծիքը): Անգլիա ի և Հարստային Աֆրիկայի երկու հասարակապետութեանց միջև կայացած հաշտութեան լուրը ոչ մի երկրում սյնքան ուրախութիւնով չէր ընդունվի, որչափ ընդունվեց մեր երկրում:

Մաս երեք երկար տարի տեղ սար սափելի Կոշտար, որի առկ մօտ երեք երկար տարիներ ճնշում էր քաղաքակիրթ մարդկութիւնը: Վերջապէս անհետացած է ու, թէև մենք չը գիտենք հաշտութեան պայմանները, կարելի է յուսալ որ այդ պայմանները սյնքան մարդասիրական են որ մի օր պէտք է կարողանան խաղաղութիւնը բոլորովին վերահաստատել բոլոր ժողովրդի և Երիտասանկան կայսրութեան միջև...

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՆ ԼԵՆԻՆ

—

Վիլհելմ կայսեր հակախ հական ճառէն վերջը, Ռուսիոյ, Աւստրիոյ և Գերմանիոյ լեհերը շատ յուզուեցան և սկսեցին խտորէն քննադատել Վիլհելմին ճառը և աս հասարակ Գերմանիոյ հանդէպ լեհերու բռնած ընթացքը:

Ռուսական լեհերու թերթերը խիստ յօգուածներ կը գրեն Գերմանիոյ և Վիլհելմի դէմ. աստորական սլաքները և լեհ աղնաւկանութիւնը նոյնպէս շատ կծու լեզուով կը խօսին Վիլհելմի դէմ: Իսկ Գերմանական երեսօրիսանական ժողովին մէջ լեհ երեսօրիսան Գոպիլսկի լեհերը ճնշելու օրինազմին հակառակ հնաւեւաւը բաւած է:

— «Մենք լեհերս առանց խտտորելու՝ մեր նախագիծում ճամբով պիտի երթանք»:

Իր արագիւրը երկու կէտերու վրայ յիշուած է. առաջինը՝ որ մենք մրնչել վերջը լեհացիներ պիտի մնանք. երկրորդը՝ չը պիտի երթանք մեզի համար պատրաստուելիք ճամբովը. որպէսզի մեր իրաւունքներու յոնարանը չը կործնուցենք:

Մինչեւ օրս Աղած մեր կուրն մէջ մենք շատ երողներէ զրկուեցանք, շատ հաւատք կորսնցուցինք և ասոր համար ալ այտուհետեւ աւելի պաշարիւն պիտի ըլլանք: Այսօր մեր վերջին ցրնորքը Պրուսական արգարագատ կառավարութիւնը կանայտանայ...»:

Մահմանդուական Գերմանիոյ մէջ լեհացիները նոյն շափով կը ճնշուին, անոնց ազգայնութեան նոյն տեսակ վտանգներ կ'ապառնան, որչափ որ միապետական Ռուսիոյ մէջ:

Լեհերուն երազը՝ արգարագատ պրուսական վարչութիւնը կանայտանի և ուրչափ լեհերու պէս ժողովուրդներ, նոյն տեսակ երողներ կուսնան ու կը հրասթափուին:

